

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, տարեկան 6 ռուբլի:

Թիֆլիսում գրված են միմյանի վերադարձման մեջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Թիֆլիս, Քեդակա, «Մասկ»

Խմբագրատունը բաց է առաւոտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Յոյսարարութիւնը ընդունում է ամէն լեզուով:

Յոյսարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հաստ լաւ խաղ են խաղացել:—Ներքին տե-
սու թիւն: Նամակ Ուրալից: Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին
տեսու թիւն: Տրամադրութիւններ:—Մշակիչ հե-
ռագրեր:—Յոյսարարութիւններ:—Տեղեկացոյց:

ՀԱՏԻՍԻ ԽԱՂ ԵՆ ԽԱ-
ՂԱՅԵՒ:

Երեկոյց հեռագիրը հաղոր-
դում է մեզ որ Կ. Պոլսի հայոց
ազգային ժողովը Օգոստոսի 25-ին
դիւնի նախագահութեամբ յունիսի
25-ին բողոքեց Ազգային դէմ
որովհետեւ անգլիական կառավա-
րութիւնը իր հիւպատոսութեանը
Երզրումի մէջ պաշտօնապէս յատ-
կացրեց Քիւրդիստանի հիւպա-
տոսութեան անունը:

Ուրեմն Ազգային կարծիքով էլ
չե կայ Հայաստան, այլ Հայաս-
տանը Քիւրդիստան է դարձել...

Եւ ահա հայոց ազգային ժո-
ղովը բողոքում է Ազգային դէմ
սովորեցնելով Ազգային աշխար-
հագրութիւնը... Ի՞նչ հանդի-
սաւոր րօպէ... Օգոստոսի 25-ին
դառնում է յորդ Բիկոնաֆիլի
աշխարհագրութեան վարժապետ...

Կարելի է հաստատ ասել որ
անգլիացիները բոլորովին հարկա-
ւորութիւն չունեն աշխարհագրու-
թեան դասերը վեր առնել այն
էլ Կ. Պոլսի հայոց ազգային ժո-
ղովից, նրանք շատ լաւ գիտեն
թէ Հայաստանը Քիւրդիստան
չէ, շատ լաւ գիտեն թէ Երզրու-
մը Հայաստանի մայրաքաղաքն է,
բայց եթէ յանդգնաբար անտես են
առնում այդ տեսակ ճշմարտու-
թիւնը, այդ այն պատճառով է որ
սաստիկ թշնամի են հայերին, լա-
կն ճանաչում մի կողմից իրանց
ոյժը և միւս կողմից հայոց ազգի
թուլութիւնը...

Իսկ յանդուգն և անամօթ
ծաղը է հայոց ազգութեան և
Հայաստանի մասին:

Այժմ գուցէ բթամիտ ան-
գլիացիները կը համոզվեն որքան
անկեղծ էր Ազգային սերը դէպի
հայոց ազգը...

Մենք միշտ յարձակվել ենք
Ազգային դէմ միշտ զգուշացրել
ենք թիւրքաց հայերին մարդասէր
Բրիտանիայի նենգաւոր և կեղ-

տատ որողայթների դէմ... մեզ
չէին կամենում լսել և ահա այժմ
մեր խօսքերը իրագործվում են:

Եւ այդպիսի դառն, անամօթ,
լիք ծաղրի դէմ անգլիական կա-
ռավարութեան կողմից խեղճ
Հայաստանի վերաբերութեամբ
հայոց ազգային ժողովը պատաս-
խանում է մի դարդակ բողոքի
միջոցով... Այդ տեսակ անհորհ-
րան անուանվում է «հարսանիքից
յետոյ երաժշտութիւն»...

Աստուած վկայ, շատ լաւ են
արել այդ սիրելի անգլիացիները,
Աստուած վկայ հայերը արժանի
էին որ նրանց ազգութեան և
նրանց հայրենիքի մասին այդքան
լիք կերպով ծաղրէին...

Քանի տարի է արդէն, որ մենք
անդադար կրկնում էինք որ Հա-
յաստանը Կ. Պոլսից կառավարել
չէ կարելի, որ իրանք հայերը այդ-
պիսով անտես են առնում իրանց
հայրենիքը, որ ժամանակ է մտա-
ծել արդէն Հայաստան տեղափո-
խել հայոց ազգային ժողովը...
Բայց զուր էին մեր բոլոր խօս-
քերը:

Կ. Պոլսից Բիկոնաֆիլին Հա-
յաստանի աշխարհագրութիւնը
սովորեցնել չէ կարելի և ազգային
ժողովի իղիօտները իրանց իղիօտ
նախագահի հետ միասին չեն հա-
կանում որ յամուրութեամբ մնա-
լով Կ. Պոլսի մէջ Հայաստանից
զուրա, նրանք իրանք անտես են
առնում Հայաստանը, իրանք ա-
ռիթ են տալիս մտածել որ Հա-
յաստանը Քիւրդիստան է ա-
նուանվում և ոչ թէ Հայաստան:

Ինչ կասէր աշխարհը եթէ
թիւրքաց մի նահանգ, օրինակ
Բուսնիկ, ստանալով տէրութենից
որ և է սահմանադրական իրա-
ւունք, ինքն աշխատէր իր ազգա-
յին ժողովը ոչ թէ նոյն իսկ եր-
կրի մէջ ունենալ այլ Բուսնիկից
զուրա, թիւրքից մի ուրիշ նա-
հանգում, օրինակ նրա յունական
նահանգներում, Լպիրոսի կամ
Թէսալիայի քաղաքներից միում...
Կասէին որ Բուսնիկից բողոք-
ները առիթ են տալիս մտածել
որ իրանք իրանց երկիրը, Բուս-
նիկ իրանց հայրենիք չեն ճանա-
չում, բայց որովհետեւ Լպիրոս
կամ Թէսալիա նրանց հայրենիք

չէ կարելի համարել ուրեմն խոս-
տովանվում են որ հայրենիք չու-
նեն...

Ղշմարիտ, շատ լաւ են արել
անգլիացիները:

Իսկ բողոքելը ոչինչ չի օգնի:
Մինչև որ թիւրքից հայերը, օ-
գուտ քաղելով իրանց սահմանա-
դրութենից, չտեղափոխեն ի-
րանց ազգային ժողովը Բիւզան-
դիայի հողից, Կ. Պոլսից, Հայաս-
տանի հողի վրա, ամեն եւրօպա-
կան պետութիւն կատարեալ ի-
րաւունք կունենայ համոզված լի-
նել որ նոյն իսկ իրանք թիւրքաց
հայերը Հայաստանը իրանց հայ-
րենիք չեն ընդունում, այլ յամա-
ռելով Կ. Պոլսի մէջ պահելու ի-
րանց սահմանադրական, ազգային
ժողովը, դորանով խոստովանվում
են, որ պատմական և աշխարհա-
գրական Հայաստանը երևակա-
յական մի երկիր է, որ Հայաս-
տանը վաղուց այլ ևս Հայաստան
չէ, այլ այդ երկիրը Քիւրդիստան
է, Ասորիստան է, կամ գուցէ,
մինչև անգամ Չինաստան է...

Իղիօտներ, չէ՞ք հասկանում,
որ դարդակ բողոքներով, այն
էլ փախչելով ձեր հայրենիքից,
զուր ոչ որին չէք ստիպի Հայաս-
տան ճանաչել այն երկիրը, որ
զուր ինքներդ Հայաստան չէք
ճանաչում:

Որոքմեի իղիօտներ, շահատե-
րութուաներ, նիւթապաշտ վա-
ճառականներ, ազա՜հ վաշխառու-
ներ, թիւրքաց ծառայութեան մէջ
կաշառքներով և գողութիւննե-
րով հարստացած պաշտօնեաներ,
անգլուի և փողատէր հոգեւորա-
կաններ գնացէ՛ք ձեր հայրենիքը,
այնտեղ ձեր մայրենի հողը մշա-
կեցէ՛ք, այնտեղ աշխատեցէ՛ք, այն-
տեղ ձեզ կառավարեցէ՛ք, այնտեղ
ձեր ազգային ժողովը տեղափոխե-
ցէ՛ք և այն ժամանակ կը տես-
նենք որ Բիկոնաֆիլը, որ անգլիա-
կան կամ այլ եւրօպական պետու-
թիւն կը համարձակվի ձեր հայ-
րենիքը, Հայաստանը, Քիւրդիս-
տան կամ Չինաստան անուա-
նել:

Աստուած վկայ, զուր արժա-
նի էիք այն խաղի, որ անգլիացի-
ները ձեր զինն են խաղացել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՈՒՐԱԼԻՑ

Եկաթէրիւնուրդ, 11-ին յունիսի 79

Անցեալ տարուց Ուրալի տարերը շատ աւելի մատ-
չելի դարձան ճանապարհորդին այն պատճառով,
որ անցեալ սեպտեմբեր ամսից երթնելու ճանա-
հար բացվեցաւ «Ուրալեան լեռնագոր-
ծական երկաթ ուղի» (Уральско-горнозаво-
дская желѣзная дорога), որի մի գիծը միաւորում
է Պէրմ և Եկաթէրիւնուրդ քաղաքները,
իսկ մի ուրիշ գիծ, որ սորանից դէպի հիւսիս է
չեղում Զուսովսկայա կայարանից պիտի գնայ
մինչև Լուսկա (Луска) ուր գտնւի քարանձա-
ւի մի հարուստ հանք: Այդ երկրորդ գիծը միայն
այս տարուց վերջերս պատրաստ կը լինի Զա-
րաբերութիւնները եւրօպական Ռուսիայի կենտրոն-
ների այս հեռավոր, բայց արդիւնաբեր գաւառների
հետ չափազանց հեշտացան այս երկաթուղու բա-
ցումով: Նիւթի-Նովոգորոդից մինչև Պէրմ ամեն օր
գնում են չորեքուսուր, որոնք չորս զանազան ընկե-
րութիւններին են պատկանում (Կապիտա և Մէր-
կուր, Սամոյլով, Կամենսկի եղբայրների նաւերը և
Լիբիսովի նաւերը) և չորրորդ օրը հասնում են
Պէրմ: Ճանապարհը առաջ Վոլգայով է և յետոյ Հա-
րունակով է Կամա գետով, որ Վոլգայի մէջ է
ընկնում: Պէրմից դէպի Եկաթէրիւնուրդ կառա-
խուրդը հասնում է 25 ժամուկ մէջ, անցնելով 468
վերստ: Եկաթուղու գիծը, որ շատ գեղեցիկ
մինչև այժմ անցնակ տեղերով է անցնում սկզբու-
մը, յետոյ ուղղակի հարաւային ուղղութիւն է ըն-
դունում, միաւորելով իրար հետ ամենանշանաւոր
հանքային կենտրոնները, որոնց գլխաւոր հանքեր
են երկաթ, պղինձ և ոսկի: Գծադրապէս գիծը
այնպէս է շինված, որ միայն մի զոյգ ընկնող ու-
նի, այնպէս որ դորանով անկասկած պիտի դուռա-
րանան յարաբերութիւնները և տրանսպորտները
պիտի միշտ ուշանան: Արդէն այժմ, մի տարի չան-
ցած, վիճակագրական թւերը ցոյց են տալիս, որ
երկաթուղու միջոցով չէ կարելի տանել բոլոր ար-
դիւնաբերած մետաքները և մի մասը տալիս են
այնու ամենանշանաւոր ինչպէս առաջ ջրով տանել: Ջր-
ային ճանապարհը թէև միշտ աւելի է ծան է,
բայց այն պակասութիւնները, որովհետև միշտ
աւելի երկար է, երկրորդ օր պակասի հիւսիսային
կողմերում այս ճանապարհը կայ միայն շատ շատ
վեց ամիս տարուկ մէջ, իսկ երբեմն բացվում է
միայն մայիսի սկզբին և վերջանում է սեպտեմբերի
վերջերս: Իսկ եթէ երկաթուղին երկու զոյգ ըն-
կնող ունեւոր, յարաբերութիւնները շատ աւելի
կը դիւրանային և շատ աւելի քան երեք կառա-
խուրդ ապրանքներով (նշապէս այժմ է լինում)
կարող էին ամեն օր ուղարկվել նոյն ուղղութեամբ:
Ճանապարհը լայնացնել և երկու զոյգ ընկնող
յարմարացնել ի հարկէ այնքան թանգ չի հստի,
ինչպէս մի նոր ճանապարհ շինել: Բայց էլ աւելի
է ծան կը լինէր, հարկաւորութիւնը նախատեսելով,
սկզբից ուղին աւելի լայն շինելու և մասնաւոր
երկաթի կամուրջները, որք, այժմ մի զոյգ ընկնե-
րի համար շինված լինելով, յետոյ բոլորովին ան-
պէտք պիտի դառնան: Բայց ինչ և իցէ պղծան էլ
առաջադիմութիւն է և Ուրալեան երկաթուղին էլ
աւելի նշանակութիւն կը ստանայ երբ պատրաստ
կը լինի Նիւթի-Նովոգորոդի երկաթուղու գէպի Պէրմ
և Ուրալը Ռուսիայի կենտրոնների հետ երկա-
թուղով անմիջապէս կապած կը լինի, միւս կողմից
երբ որ կիրաքործվի այն գծի շարունակութիւնը
գէպի Նիւթի-Նովոգորոդից մինչև Պէրմ, շատ
արանդիտի մի նշանաւոր գիծ:

Հոգեհաւան չորս օր ճանապարհորդելը այսպիսի
անընտել և աննշան տեղերով ինչպէս Վոլգայի և
Կամայի փոխին են շատ միջիջարանային չէ: Ամեն
տեղ նոյն տեսարան՝ ահապի տարածութեան պըտ-
ղաբեր երկիրներ բարձի թողի կըսած, շատ անգամ
երկու երեք ժամուկ միջոցում ոչ մի գիւղ, ոչ մի

աւելորդ չենք համարում յիշել այստեղ նա-
մակի հետեւեալ խօսքերը:

«Մենք իրաւոյն ենք կարգում այն դատա-
ւորն և այն զեղեցիկ օրինակներին, որոնց ըն-
ծայել է մեր հանրապետական մեծ գեներալի
կեանքի օրինակը մեր քաղաքական վերջին
միջոցն ամենանշանկաւ ձգնաժամին և դեռ այս
բաւական է մենք միայն նրա յիշատակին, նրա
ազգասիրութեանը և նրա դէպի աւանդալի-
տական օրէնքներն ու պարտականութիւններն
ունեցած սերունդ հաւատարմութեան ենք
պարտական հանրապետութեան ամենախնա-
կազին երջանկութիւնը: Գործնական կեանքի
մէջ յարստեւ պահանջէր այդ բարեպաշտ
անկի յիշատակը, և դուք դրանով կը գտնէք
սարգսպետ, ինչպէս և անցեալում խաղաղա-
սիրութեան գարդացումը, գործունէութիւն և
հաստատմանութիւն բոլոր այդ վերապի քա-
ղաքի հանրապետական բոլոր ժողովրդի ծո-
ցում, ուր դեռ մի դարը ու զիջ չը լրացած Ֆր-
անսիական ազատութիւնը երկու անգամ հիմք
գտաւ: Այս հռչակագրի տարեգրութիւնը շնոր-
հիւ, մենք առիթ կուենանք դեռ երկար
տարիներ տնտեսելու, և Փարիզը նորից ստա-
նալով ծրարական մայրաքաղաք լինելու փառ-
քը, մեզ մտացնել չի տայ երբէք այն վշ-
տահար տանջանքները, որոնց ստա տարի շա-
բաթակէն երթաւոր էին վերապի այս ճշմա-
րիտ հանրապետական յանգիծները:»

Պ. Ալբեր-Ժոզֆ վերջացնելով այս նամակը,
առաջարկեց պ. Գամբետային կենացը: — Ես
խում եմ, ասաց նա, այն մեծ հայրենասիրի
կենացը, որը այնքան տարիներէ յետոյ հաշ-
պէս մեծ գեներալի անձնական վաճառի պա-
տարանի ներքոյ քայլ առ քայլ անցնելով, վեր-
ջապէս հաստատմանութեամբ հասաւ յոյժի
24-ին, ուրիշ խօսքով ասած, այն բաղդաւոր
ժամանակին, երբ մենք ամենակատարել ու
ամենապատշաճ կերպով կարող ենք կատարել
հանրապետութեան վերջնական օժան հան-
դէսը:

Յետոյ հետտրը թողնուած ինդիքը,
որ այդ կենացին կցէ և պատգամաւորների
ժողովի փոխ-նախագահ պ. Բրիսսոնի կենացը:

Պ. Ալբեր-Ժոզֆի այս խօսքերին կրկնակի
ծափահարութիւններով ողջունեցին: Սրանից
յետոյ պ. Լամար-Բրիսսոն շնորհակալութիւն
յայտնեց և Ֆրանսիական յեղափոխութեան
մասին մի նշանաւոր ճառ ասաց, յետոյ իր
խօսքերը դարձնելով դէպի դատարարաւ-
թեան գործը, նա մասնաւորապէս ցոյց տուեց
պետութեան իրաւունքները, յետոյ պ. Լոն-
տրը սկսեց գովել պ. Պրէի արժանաւորու-
թիւնները, և ասաց որ հանրապետութեան
հիմնադիրներից մէկն էլ այդ համետ, բայց
պատուելի քաղաքացին է. յետոյ խօսքերը դարձ-
նելով դէպի այն անձնաւորութիւնը, որի յի-
շատակը յաւերճանքով համար հաւարելի
էին այդտեղ այլքան նշանաւոր քաղաքացի-
ներ, նա գովաբանական խօսքեր ասաց Լո-
շին, նկարագրելով նրան իբրեւ մասնաւոր
անձն, իբրեւ քաղաքացի և իբրեւ զինուոր:

Սրանից յետոյ պ. Բրիսսոն վերջացնելով իր
խօսքերն ասաց:

«Պատկարութիւնը կը կարգանայ յարգե-
լու բաւականութիւն տալ ռամկապետակա-
նութեան ցանկութեան: Որովհետեւ Լոշին
զիջողական ժամանակի յաջորդները մենք
ենք, ուրեմն մենք պէտքէ աշխատենք պատիւ
բերել այդ յաջորդութեանը: Սեզ հարկւոր է
մի ազատ և համարձակ կառավարութիւն,
որպէս զի կարողանայ յետ ստանալ պետու-
թեան կորցրած իրաւունքները և կարողանայ
նորից խաղաղութեամբ սկսել ծրարութիւնը
մեծ յեղափոխութեան գործը: Ուրեմն ես
նուիրում եմ այս բաժակը Լոշին և Բրիսսոն-
իս թեան սուրբ յիշատակին»

Նրկարտեւ ու եղբորմեծ Ժոզֆ հարու-
թիւնները յետոյ, ժամը կը լինէր մօտաւորա-
պէս 10-ը, երբ հանդիսականները ամենամեծ
կարգապահութեամբ սկսեցին ջրվել:

ԱՆԳԼԻԱ

«Indépen. Belge» լրագրի ներկայ տարվայ
181 համարում կարգում ենք, որ յունիսի
27-ին կայացած յորդերի ժողովում վիճաբա-
նութեան առարկայ էր Հայաստանի վերանո-
րութեան նախագիծը: Որովհետեւ այդ օ-
րուայ ամբողջ վիճաբանութիւնները բացա-
ռապէս մեր հայրենիքի շահերին է վերաբե-
րում, ուստի մենք կը հաղորդենք մեր ըն-
թերցողներին բոլորը, ինչ որ խօսվել է այն-
տեղ:

Լորդ Կարնարվոն. — Միջոցներ, ևս կամե-
նում եմ ձեր ուշադրութիւնը դարձնել Հայ
ժողովրդի ներկայ դրութեան վրա, և յիշեցնել
ձեզ այն վիճակը, որ նրանց խոտաւորած է
Բերլինի դաշնագրութեան 61-րոր յօդուա-
նով:

Ձեզ յայտնի է, որ խելքի կրթութեան
դատարարութեան և առեւտրական գործու-
նէութեան վերաբերութեամբ, հայերը հաւա-
սարկում են յոյներին և մինչև նոյն իսկ հը-
րէանքներն:

Բերլինի աւագածոցովը այլ և այլ ժամա-
նակներում երբեք անգամ զբաղվեցաւ այս ժո-
ղովրդի վիճակով: Դաշնագրի 61-րոր յօդուա-
նի հիման վրա, Բ. Գուռը խոտաւորեց է բո-
լոր հայաբնակ նահանգներում առանց ուշա-
նելու մեծամեծ վերանորոգութիւններ անել,
որպէս զի արանցով այս վերջիններս պաշտպանե-
լէքքեզներէ և քիւրդերի հալածմանցներէ:

Մի և նոյն յօդուածի վերջը Բ. Գուռը խո-
տաւորեց է իր արած վերանորոգութիւնների
մասին պարբերապէս հաշիւ ներկայացնել այն
մեծ պետութիւններին, որոնք պէտք է հսկեն
յօդուածի իրագործմանը:

Չը նայելով անգլիական կառավարութեան
բոլոր ջանքերին յարգել տարւ այս խոտու-
նէրը, այնու ամենայնիւ Բ. Գուռը զեռ չէ
կատարել իր խոտու-նէրը:

Կեռ աւագածոցովի գումարվելուց առաջ,
ամենքին բայց աշխարհ յայտնի էին թիւրքաց
վարչութեան անհոգութիւնը և նրա դատա-
տանական անարդարութիւնը, որոնց ենթակայ
էին բոլոր այն նահանգները, որոնք հպատակ-
վում էին նրա օրէնքներին: Այժմ էլ նոյն դը-
րութեան մէջ զեռ ևս ոչինչ փոփոխութիւն չէ
նշանվում:

Թիւրքիան իր երկրի ազգաբնակչութիւնների
պաշտպանութեան համար, ճանաչեց մի մե-
ծամարմին ժանդարմի կազմելու կարեւորու-
թիւնը, բայց յետոյ նա աշխատեց համոզել
որ այդպիսի մի ժանդարմի պահելու համար
նա հարկւոր եղած միջոցները չունի: Յետոյ
նա կամեցաւ ցոյց տալ, որ օտար պետու-
թիւններից որոշած գաղաւթներ նշանակելը
վերաւորական է սուլթանի իշխանութեանը:
Իսկ ինչ կը վերաբերի գանձարանի վերանորո-
գութիւններին, նա հաւատացնում է, որ այդ
վերանորոգութիւնները միայն անգլայի կեր-
պով կարելի է իրագործել, այնպէս դա ահա-
զին շփոթ ու խառնակութիւն կարող է պատ-
ճառել Ֆինանսական գործերին:

Մի խօսքով Թիւրքիան Մահմադի երկրորդ
շաւարեանին է ազատում, որ կատարէ այն վե-
րանորոգութիւնները, որոնց նա պաշտօնապէս
խոտաւորեց է իրագործել:

Սրա մասին ես չեմ պատկարացնում մեր կա-
ռավարութեանը: Բ. Գուռը իր պարտակա-
նութիւնները յիշեցնելու համար մեր կառա-
վարութիւնը արել է, ինչ որ կարողացել է
անել: Բայց ես այլքան կասեմ, որ նա Բեր-
լինի դաշնագրի Թիւրքիայի վրա դրած առա-
ջարկութիւնը նրան կատարել տալու համար
անհրաժեշտ միջոցներին է դիմել:

Ահապէս շարունակ մի ամիս է, որ Թիւր-
քիան հետախուզական բազմաթիւ յանձնա-
ւորներ է կազմել: Այդ յանձնարարները գրեթէ
ամենքն էլ բացառապէս կազմված են մու-
սուլմաններից. իսկ եթէ այդ խմբերի մէջ
գտնվեն էլ մի քանի քրիստոնէաներ, այդպի-

սիւնների թիւը այնքան փոքր է, որ նրանք
ոչինչ ազդեցութիւն չեն կարող ունենալ:
Այսպիսի կազմակերպված յանձնարարները,
մեր կարծիքով Բ. Գուռը կողմից մի տեսակ
զինակներ են, որոնք նշանակված են ծածկե-
լու նորանոր ճնշումներ ու բռնակալութիւն-
ներ:

Սակայն հայերի ամենամեծ պահանջն այն
է միայն, որ նրանք կամենում են վայելել
մարդու ամենատարրական իրաւունքները:

Նրանք կամենում են, որ օրէնքի առաջ
հաւասար լինեն. նրանք կամենում են, որ
նրանց անձնաւորութիւնը և նրանց տեղակա-
նութիւնը, որոնք մինչև այժմ միշտ սպառ-
նացած են եղել չէքքեզներից և քիւրդերից,
այսուհետեւ ապահովված լինեն: Վերջապէս
նրանք իբրեւ քրիստոնէաներ, կամենում են, որ
քրիստոնէայ կառավարչներ ունենան:

Այս արդար պահանջները, սրանք հաստա-
ված են Բերլինի աւագածոցովի, զեռ ևս ոչինչ
բաւականութիւն չեն ստացել, և Թիւրքիան
կարծես բնաւ դիտաւորութիւն անգամ չունե-
նրանց բաւականութիւն տալու:

Բազմաթիւ պետական նշանաւոր մարդիկ
այն կարծիքի են, թէ մինչև որ Բ. Գուռը
վրա ստանի ստիպմանը չը լինի, նրանից
ոչինչ չէ կարելի սպասել:

Նոյն է արդեօք այսպիսի ստիպմանը: Նա
չաւ կը ցանկայի իմանալ թէ արդեօք դաշ-
նագրի ստորագրելու օրից սկսած մինչև
այժմ հայերի վիճակի բարեկարգութեանը
նուիրած յօդուածի իրագործման մասին ինչ
է արել Անգլիան, հետեւաբար ևս առաջար-
կում եմ ժողովին, որ այս հարցի վերաբերու-
թեամբ շուտով վճիվելու մասին, նա ձեռք
տայ հարկւոր եղած պաշտօնական հրա-
տարարութիւններին:

Լորդ Կարնարվոն. — Հայերը 1393 թ-ից սկսած
դադարել են ապրել իբրեւ ազգութիւն: Վեր-
ջին ժամանակներս նրանց վիճակը այնչափ
անբաղդ գտնվեցաւ, որ կարողացան օտար
պետութիւնների ուշադրութիւնը գրաւել:

Բայց և այնպէս այն վերանորոգութիւն-
ները, որոնք սպասվում են Թիւրքիայից, չեն
կարող իսկոյն և եթ գործադրվել և շատ
կարելի է, որ Բ. Գուռը հեռատեսութեամբ
է վարվում, որ այդ վերանորոգութիւնները
փոխանակ բոլոր երկրում միանգամից գործա-
դրուել, նա դեռ փորձ է անում մի շատ սեղ-
մված երկրի վրա:

Լորդ Ալեքսանդրի. — Նա մասնակցում եմ այն
կարեկցութեանը, որ լորդ Կարնարվոն ցոյց է
տալի դէպի Հայ ժողովուրդը, բայց ես բո-
լորովին մերժում եմ այն պատասխանատու-
թիւնը, որ նա գցում է կառավարութեան
վրա:

Բոլոր այն պետութիւնները, որոնք մասնա-
կցել են աւագածոցովին, մեզ հետ միասին
ստորագրել են 61-րոր յօդուածը: Բայց այդ-
տեղից մինչև նրա անկիւնական իրագործումը
դեռ հեռու է:

Լորդ Կարնարվոն հաւատացնում է, որ
հայերը շարունակ ենթակայ են չէքքեզների և
քիւրդերի յարձակմաններին: Դա կարող է
ճշմարիտ լինել: Բայց մի՞թէ կարելի է մի օ-
րից մինչև հետեւեալ օրը մի ժողովրդի վի-
ճակի փոփոխութիւն անել:

Ժանդարմի կազմելու համար Թիւրքիան
պէտք է գործ դնէ բոլոր իր միջոցները: Ան-
շուշտ Թիւրքիան խոտաւորեց է իր երկրի ազ-
գաբնակչութիւններին տալ հանգստութեան և
անդրորութեան այս երաշխաւորութիւնը:
Դուք ասում էք, որ նա չէ կատարել իր խո-
տու-նէրը: Բարբոսի ուղիւ է ձեր ասածը, միայն
զբաւ մասին ահա թէ ինչ կը պատահանի:
Ես չեմ կարելի ծախսել այն փողը, որ չը կայ:
Թիւրքիան վերանորոգութիւններ չը կարողա-
ցաւ իրագործել, — բոլոր բացատրութիւնն
այս է:

Բացի այս մի խառն ու շփոթ և աղմկալի
ժամանակից յետոյ, իսկոյն վրա հասաւ մի ա-

ւերից պատկազմ, որի արեւտարեր հետեւեալ-
ները այնպէս ծանարացան Թիւրքիայի ճակա-
տագրի վրա, որ Թիւրքիայի կայսրութիւնը
մինչև այսօր էլ զեռ չը կարողացաւ աչք
բանալ այդ արեւտարի գրութիւնից:

Եւ այսպէս շատ չը պէտք է զարմանալ,
որ նրա խոտաւորները այսքան ուշացած են:

Թիւրքիայի անկարելիութիւնը բացատրելուց
չը պէտք է եզրակացնել թէ մենք դադարել
ենք ցանկութիւնից, որ խոտաւորված վերանո-
րութիւններն իրագործվեն:

(Կը շարունակվի)

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՏԻՆՈՎՈ, 29 յունիսի (11 յուլիսի): Նրէկ
առաւօտեան գործերը օաճմանաբարութեան
հաւատարմութեամբ համար երգում ընդու-
նեցին: Այլքանաւոր իշխանը բոլորապէս լե-
զուով մի ճառ խօսեց, որի մէջ նա յայտնեց,
թէ ճրտօփի գործախուժութեամբ պէտք է Դոնդու-
կովի անուշը կրէ. յետոյ նա յոյս յայտնեց, թէ
ճրտօփի գործախուժութեամբ արժանի ցոյց կը
տայ այդ պատուին: Յետոյ իշխանը այցելեց
հրէեհից վրաստաններին, և անձամբ բաժա-
նեց նրանց 4000 Ֆրանկ իբրեւ օգնութիւն:
Առաւօտեան մնացած մասը իշխանը գործ-
դրեց ծանօթ անապուռ ուսումնարանական գործի
հետ: Իշխանը ճրտօփում ընդունեց ուսուց-
չական պատգամաւորութիւնը և վճարեց ճրտ-
փում գիմնադրաւ և օրիորդաց համար պան-
սիօն բանալ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունիսի: Բարձրագոյն
հրաման է Բէասարաբիայից, Տալիքիան նա-
հանգներից և Թրիսի թիւրքազուց վերցնել
պատերազմական գրութիւնը: Քաղաքական
վարչութեան անձինքների պատասխանատու-
թեան առանձին կանօններ յիշալ տեղեւորում
կատարված ծանր յանցանքների վերաբերու-
թեամբ հրամայված է վերցնել, թողնելով իր
գործութեան մէջ օգտուողի 9-ի 1878 թ-ի
ուկազը զինուորական դատարանների ժա-
մանակաւոր իրաւասութեան մասին, այն գոր-
ծերի վերաբերութեամբ, որոնք նշանակված
են յիշալ ուկազի մէջ, և յունիսի 5-ի 79
թ-ի ուկազը, որ տալիս է զենեւալ գուրէր-
նատրներին կարգ պահելու իրաւունքը:

ՍՈՖԻԱ, 1/12 յունիսի: Այսօր բոլորական
իշխանը մտաւ Բոլգարիայի մայրաքաղաքը:
Սօֆիայի բնակիչները անթիւ փառաբանու-
թիւններով (ovation) նրան սիրալի ընդունե-
լութիւն արին: Քաղաքը զարդարված է դրո-
շակներով, ծաղիկներով և յայտնական կանա-
րներով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի: «Правит. Вѣ-
стѣ» լրագրի խօսքերով բոլորական իշխանը
յունիսի 30-ին Պէզնայից Կայսրին ուղար-
կել շնորհակալութեան հետագրի մէջ տեղ է
որ ազգային ժողովը մի պատգամաւորութիւն
է նշանակել, որպէս զի նա Կայսրին յայտնե-
լութեամբ ժողովրդի հաւատարմութեան ու
կրօնատաղիտութեան գագաթնէնքը, և թէ նա,
իշխանը իրաւունք է առել, որ այդ պատգա-
մաւորութիւնը յունիսի 25-ին ուղեւորվի Ս.
Պետերբուրգ, և այդ մասին նա ինդրել է
Դոնդուկով-Սորակովին, որպէս զի նա իշխա-
նի խոր երախտագիտական դպրմանը հետ
միասին ներկայացնէ յիշալ պատգամաւորու-
թիւնը նորին Մեծութեան Կայսրին:

ՄՈՍԿՎԱ, 2 յունիսի: Վարնայից հաղոր-
դում են «Русскій Курьеръ» լրագրին, որ
Բոլգարիայի վարչական բոլոր պաշտօնները յա-
նձնված են բոլորակերպ: Յունիսի 18-ին ու-
սաց ամենավերջին զինուորն էլ Ռուսաստան
կը վերադառնայ: Օսման-բազարի ապստամ-
բութեան պատճառով դիտաւորութիւն կայ
զինվածքի անկ մուտելմաններին:

ԲԵՐԼԻՆ, 2/13 յունիսի: Ցայլ է Յորդանայ
միւնիստրների հրաժարականների ընդունվեցան:
Դաւանութիւնների միւնիստր նշանակվեցաւ
Պուտկամեր: Լուցիուս նշանակվեցաւ պետա-
կան կայսրաճնների միւնիստր. իսկ Լոֆման նը-
շանակվեցաւ առեւտրի և արհեստների մի-
նիստր:

ՏԻՆՈՎՈ, 2/13 յունիսի: Մուսուլմանների
Օսման-բազարի ապստամբութիւնը նուաճվե-
ցաւ բոլորական գործից: Մուսուլմանները
վերաւորվածներով և ապստամբներով 200 հոգի
կորցրին: Գերլիների թիւում կայ ևս մի թիւը-
բայ Բէզիլ:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

